

ՏՈՍՊԱԿԱՆ ԱՐԶԱԿԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄԱՆԱԳԻԵՐՑԻ

...—————...

**Բ** Ան ի մամիս յառաջ, այս էլերուն մէջ հրատարակած (Բաշմիդ, 1896 թուրիս, երես 325—329) մէկ գրոթիւն՝ — « Յաւերլած եւ ընսութիւն ցուցակի տուպակամ կամ հայկական բեւեռածեւ արձանագրութեանց (Հնիկանայ) » — այսպէս կը վերջանէի. « Անօր այսպահ: Պատեհ առթիւ նորէն կը գառնանք այս խնդրոյն » :

« Պատեհ առթիւ որ ներկայացած կը կործեմ, տեսնելով որ ուսումնակր և զիտնակ անբարեկամներ կը քաղաքերեն զիս և յորդոր կը կարգան շարունակելու համար ընտրած մասնաճիւռ: Յայտնելով չնորդակալութիւնն ոյն յարգելի բրդիկամաց՝ կը շարունակմ ըստ խոսման:

« Կամ վերնազրիս առաջին բառէն սկսինք: Ասորեստանաբանութեան (assyriologie) կրկին ուսուցիչներուս երէցն J. Oppert, որ Եւրոպիս մէջ մենագրութեան առաջին հիմնադիրն եղած է իր երկու ընկերակցաց — Dr. Hinckesի և Sir H. Rawlinsonի հետ, կը համառակի այս անուանակուրթեան առարկելով, թէ « Այս ձեւ գրութիւնները ռառուց կոչելու համար պէտք էր որ միայն Վանայ մէջ զանութիւն ասուք, մինչդեռ Հայաստանի շառական տեղերը կը գտնուին. ուստի անիրաւութիւն ըննելու համար՝ պէտք պիտի ըլլայ միւսներ ալ իրենց դառնուած տեղերուն անուններով կոչել, ուսկից պիտի ծագի խառնաշփոթութիւն մը: Ըստ իս՝ լաւագոյն է ընդհանրական և յարմար ուրիշ անոն մը տալ, քան թէ ռառուց կոչելով մասնաւորել » :

Յարգելի պատուցիս այս դիտողութիւնն իրաւոցի գտնելով հանդերձ, դիտել տուի թէ ռառուց անոն անոր համար տրուած է, որ առաջին անգամ Վանայ մէջ գըտնուած են անոնք, և թէ այս անոննը կը գործառուի ոչ թէ իրեւ գոյական՝ այս իրեւ ածական, որով ռառուց անոն մէջ պէտք է գործառեամբ հասկնալ « Վանայ բրդին վրայի արձանագրութեանց տեսակէն ո իմաստն: Խոր ալ պատասխանեց, թէ « Վանայ բրդին վրայ պեմենեան, մարական և ասորեստանեան արձանագրութիւններ ալ

կան ո: Ուրեմն, ըսի, արտոնացւ ( = հայաստանեայ, հայաստանեամ ) անունը պահենք, ինչպէս որ գործածական գարած է, և ինքն ալ գործածած է: Աւելցուցի նաև թէ կրնակը կոչել սրաւուու ( = ուրարտեան ) (1) ևս, քանի որ Սարգսնի արձանագրութեանց մէջ « Աւրարտի », անուամբ յիշատակուած է իրենց երկիրն, և ինքն ալ թարգմանած է « Հայաստան »: ասով գարենալ կը մոտենանք արտոնացւ անուանակոչութեան: իսկ Հերոդուտէն աւանդուած « Աւրարտ », անունն, որուն հետեւելով լուրման « Աւարդեամ », կը կոչէ այս ժողովուրդն և իրենց արձանագրութիւններն, (Lettres assyriologiques, Հ. Ա. երես 119, 132 և 133), պարագանել Աւարուտի մէկ արտաբեր արտասանութիւնն է: հին Պարսից ձայնական գործարանին մէջ և ո արտաբերութեանց ասրբերութիւն շրջուելիվ: Աւարուդ ալ՝ Ս. Գրոց « Աւարատ », և Ասորեստանեայց « Աւարարտի », ձևերուն միջին մէկ կերպն ըլլալը կը հաստատուի, որպէս կը պահէ Քոլիստոն: (Herodotus, Հ. Դ. երես 250—254): թէ Ռուսուցակենց քրուտութեանցւութեանց ասրբերութիւն շրջուելիվ: Աւարուդ ալ՝ Ս. Գրոց « Աւարատ », և Ասորեստանեայց « Աւարարտի », ձևերուն միջին մէկ կերպն ըլլալը կը համար, սակայն առարկեցի թէ Քետասացիք (Հետէօն, Hittites) արդէն այսպէս կողովի սկսած են գիտնականներէ: Հետևակար որոշեցինք հետեւի հոսանքն և զործածել անխմբարար թէ « հայաստանեան », և թէ « սոսպական », անուններն, — « մինչև ցնոր տնօրինութիւն »:

Գալով վերնազրիս միւս բառին, — Մանազկերս կամ Մերազկերս անուան, — մեծամասա գիտնականն Այս կը համարէ թէ նոյն է ընդ « Մանազ-կերս = Մենուաշ քաղաք (?) »: (Journal of the Royal Asiatic Society, 1882, երես 540). իսկ լուրման այս կերպն անունը (Մենուաշ) կը մերձեցունէ Ս. Գրոց Դաշնի և Նիկորազոսի համասկացւոց (առ Եօնիսակ: Հ. Բ. Ա. 3, 6) մուհանին, որ գործածուած են Հայաստանի մէկ մասը նշանակելու համար (2): Գլ. Երեմ.

1. Ասորեստանեայ տառերն հայկական այբուբենից դրեւու համար՝ կը հետեւիմ եւրոպացի գիտնականներէն ընդունուած կանոնին, և Արքազերեմ մինչեւ հիմայ անուշազրութեամբ ըրած մէկ սիսակւ՝ վելով « Աւրարտի », փիսանակ զրեւու: « Աւրարտի »: Ասորեստանեայ տառերն երբաւական այբուբենուն ներկայացընելով՝ կուննանէք, Դ = դ, Մ = տ, Ղ = ղ: Այսպէսով Աւարուտի աւելի կը մոտենաց « Աւարատ », սովորական ձերին:
2. Անչուշտ մեր Մանաւապէն և Մենուաշէն

תל. 27, «արարատեան թագաւորութեան և ապանազեան զնդին» յիշատակութիւնը կ'ընէ, ըստ Եօթանասնից թարգմանութեան<sup>(1)</sup>, մինչեւ ըստ երրայական և ճշշացոյն բը-նագրին է նոքշԱ՞Ռ ԵՎ ՄԵՐ ՏՐԱՋԻ ՅՈՒՂՈՒՅ

(մասիսոր արարատ մինի ուսացնազ) = “Արարատայ, Միննոյ և Ապանազայ թագաւորութիւնը, Երբեմիա սոյն հատուածն՝ Ա. Գրոց ասորական թարգմանութեան մէջ գրուած է, ըստ հրատարակութեան Տ. Լեշի, Լոնդոն, 1823 ։ Աւածիօ Աւածիօ<sup>(2)</sup> Այսի Խօսքն (մայրուոր գարարատ՝ ուշդարձեն, ուշդարձնան) = “Արարատայ և Հայաստանի և Արանազայ թագաւորութիւնը, ուստի Մինինի կը նշանակէ “Հայաստան”, ինչպէս կը մեկնեն նաև երրայական բառագիրք. բայց աւելի ճիշգը Միննին կը նշանակէ Հայաստանի մէկ մասը միան, և ի բարձրաւորի Ուրմիւ էնին հարացային կողմէ երկիրն, ըստ նորացոյն հետազոտութեանց Բների (Աղմադուն Հանրէ, 1896, Ա. երես 27-36), և ոչ “Անս”, ինչպէս կը կարծէ Նորման. (Lettr. assyri. Ա. երես 22, 148, ևայլն).

Գետենուու ալ իւր երրայերենն հոյակապ բառազրին մէջ Միննին նոյնացնելով “Հայաստան”, հետո, “Մանաւա” = Մանաւա, անուան և անոր մինչ միամութիւն մը կը նկատէ: Կոյն հատուածն մէջ Գետենիուս այսպէս կը մեկնէ նաև Armenia բան, հետեւով Bochartի<sup>(3)</sup>. — Երբ. ՊՊ (հար) կը

տարրեր է Հրեական Հնորհեանց մէջ Յուղաւառակն յիշաւած Խոնձահու Թագաւորութեանի, թէ և ըլլայ նոյն լեզուաբանական տեսակեաու:

1. Ա. Գրոց Եօթանասնից թարգմանութիւնն, որ իրեւ բնագրի ծառայած է մեր նախանաց, շատ աղաւազութեանն կրած է. այսպէս Երբեմիա յիշեալ կատորը կը գտնենք օրինակի մը մէջ, — թաւուես ձրաւու ուր, չափ ու օճառու ապաստարեցնեք զթագաւորու որ առ իւ, և Աղմանգեանց, : Յայ օրինակին մէջ Արարատ անուան առել բնաւած է ձրաւու հրամայականն օրան: և ապաստարեցնելու, զըրգուել, և այլն բայցն, որ յառաջ եկած է Արարատ անունը սխալ կարդայէն. Նոյնպէս պիտի ընթերցման արդինք է նաև Արանացեանց ձեն՝ որ Երեւն ըլլայ Հայական, փոխանակ արականի: Ուրիշ աւելի ընտիր օրինակի մը մէջ կը գտնենք — թաւուես արաքեթ... աշխանցու (Երեւն. Ի. 27):

2. Տպագիրն աւել վնշի՞ (դարադատ), որ անշուշտ ապաշտական սխալ է՝ թ և տառերը չկ'սիլով:

3. Bochart, Phaleg Ա. աւ. 4, երես 19-20,

նշանակէ “Լեառն” ՊԵՆ = “Միեմի = Հայաստան”: Ուրիմ Արտեմեա = ՀՐԱՄԱ (հարմիննի) կը նշանակէ բառ առ բառ “Լեառն Միննաց”, = Եւնային Հայաստան = Բարձրաւանդակ Հայաստանի<sup>(4)</sup>:

\* \*

Հիմայ գանք մեր բուն նպատակին: Ներկայ արձանագրութիւնը՝ զոր անցեալ անգամ յիշած էի Ա. թուակամուրին տակ, (Բարմ. հանդ. 1896, երես 328), 1<sup>st</sup>, 20<sup>th</sup> երկայնութեամբ և կէս մետր լայնութեամբ ու նոյնքան բարձրութեամբ քարի մը վրայ զըրուած է, որ Ք տանուի բաւական առ վիճակի մէջ: Օրինակած է տեղւոյն (Մանազկերութիւն Հարաբախն, իսկ հրատարակած և մեկնած է Ասորեստանաբանութեան կրտսեր բայց հմուտ ուսուցիչ վեր. Հ. V. Scheil, ի թերթի Recueil de Travaux relatifs à la Philologie et à l'Archéologie égyptiennes et assyriennes, Հ. մ. Ժ. Ը. (1896), երես 75-77:

ուր կ'ըսէ նաև թէ Ս. Գրոց “Առքանազ, Վախգիան է, ինչպէս կ'ընդունին նոր բանաւութիւն”:

2. Հ. Գևոնդ Վ. Մ. Ալելյան ալ տարրեր մեկնութիւն կու աայ՝ ըսկեով, — և կարծէք է Ս. Գրոց մեկնչաց՝ թէ նոյն իսկ մեր ազդի կամ Երկրի անուն ըստ օտարաց, Արմենի կամ Արմենին, երբայիրէն՝ Լեռան լուսնի նշանակէ, իրը թէ Երեւնց վրայ լւսոնի դիտաչք եղած ըլլան՝ յիշեալ զրակից Քաղդէից նման»: (Հիմն հաւատը Հայոց, երես 100): — Միննին “Երարայերէն... լւսոնին չ չշանակեր, երբ. «լւսոնին» է ՀՀԴ<sup>(5)</sup> (իշանակ = լվանա) և ՇՐՋ (սահար), արամերէն ՇՐՋ (սահար). իսկ հընդուրապական լեզուաց մէջ միննին ձերն մտայց “ամիս», նշանակութառեր չեն պահսիր, զոր օրինակ. յն. սկս, լիթ. տօնու լու. տոնեան, ն. ք. գերեւ. Monat, անգզ. հայուն. անսկանքին մաս՝ թէ “ամիս” կը նշանակէ և թէ “լւսոնին”, իթէ հնդկութականուն լւսոնի ուղենք՝ ուրիշ ճամբար մը կը բացուի մեր առջեւ, — Երանեան լեզուական Արևելիար մտաքան մէջ պէտք է գոյութիւն ունենալ և նշանակէ “արևելուաք», ինչպէս Արացերէնը կը նշանակէ “Հարաւային”, այս բառը թերեւ ըլլայ “Խարաման”, որ կը հաստատուի նշերկայ սա հաւուածնի: Այլ թէ Արհանց չար կարծիքի նոցա, վասն գնարամանի անունն յանձնն կրեւոյ՝ առ ի յարկն զարդարակիւսուելելիսն արկանելոյ, ուստի և զանունն իսկ բդ-

Ահաւասիկ արձանագրութեան ընթերցումն, ըստ  
Հ. Եկմի.

1. (Յ. աստուծոյ). Խալ-դի-ի-եր-եի ոչ-մա-ա-  
շի-ի-եի [յ. աստուծոյ] Խալ-դի-ե կ-[որդիյի]

2. [յ. մ.] Մի-ի-նու-ա-ու-շէ (յ. մ.) իշ-պու-ու-  
ի-ե-ի-ե-ի-ե-ի-շէ

3. ի-ե-ի սու-ս-ի-ի շ-ի-զ-ի-ի-ը-ու-ու-ի և-ու-  
[յ. ի]-շ-ի-ի-ը-ու-ու-ու-ի

4. բ-ա-ա-դու-ո-ս-ս-ի-ի-կ (յ. մ.) Մի-նու-ա-եի  
(յ. մ.) իշ-պու-ո-ս-ի-ի-ի-ի-ի

5. կրիազ քար-ա-ի-ի կրիազ ալ-ա-սու-ու-ի-ե-ի-ե  
Էրիազ (յ. ե.) Շա-ու-րա-ա-ու-կ

6. կրիազ (յ. ե.) Բի-ի-ի-ի-նա-ա-ու-կ կրիազ  
կ-րի-կ-րա-ա-ու-կ ա-ու-ս-ի

7. [յ. ք.] Ցու-ու-պա-ա պա-ա դուպ-րի (յ.  
աստուծոյ) Խալ-դի-ի-ե-ի-եի ոչ-մա-ա-շ-ի-եի

8. (յ. աստուծոյ) Խալ-դի-ի-ե կ-ու-րի-ի-կ (յ.  
մ.) Մի-ի-նու-ու-ա-շէ

9. [(յ. մ.) իշ-պու-ո-ս-ի-ի-կ ի-ե-ի-ե-ի-շէ ի-ե-ի սու-  
ս-ի շ-ի-ի-ը-ու-ու-ու-ի] (¹)

Չոր կր թարգմանէ.

Ա Ա մեծ Խաղդիան, առ տէրն Խալդի, Մինուաշ,

Խարամանեց առ „: (Եղնիկ, Բ. Ժ.): Գիտենք նաև թէ Շա-  
պաւէ բնէ պատասխանց առ թագաւորն ջենաց, երբ  
այս վերջին փախստական Մամունը կը պահանջէր.  
“Մի թուեացք քեզ քուեար, քանի անխոզ գքեզ առ-  
նելոց՝ հալածեցք զնս յաշխարհէս իմմէ յեզր երկի և  
ի մասն արևոս, որ հասար է նևոն մահոց „. (Խոր. Բ.  
Ա.). քանի զի զՄամդուն զրկած եր Հայաստան. “ ա-  
սոքէ զնս, երբև զուրանդի, առ գործակալս իւր որ է  
Հայո „ (Խնդ):

1. Անգինաւոր փակագիծ [ ] կը նշանակէ կոտրած  
և կամ Եկյէն սրբագրուած. իսկ աղեղնաձև փակագիծն  
( ) կը նշանակէ յայտար եանն յաջորդ յասուկ ա-  
նուան, այսպէս (յ. աստուծոյ) = յայտար սասու-  
ծոյ, (յ. մ.) = յայտար մորգոյ, (յ. ե.) = յայտա-  
ր երկի, (յ. ք. = յայտար քաղաքի:



որդի իշպուինւոյ, նորոգեաց զայս տռասի. նորոգեաց աւերտալ պալատն վասն (<sup>9</sup>) Ամենուաշի, որդի իշպուինւոյ, արքայ հզօր, արքայ մեծ, արքայ երկրին Շաուրացւոց, արքայ երկրին Բիէյնացւոց, արքայ արքայից, իշխան Տուշպայ... Առ մեծ խաղուեանս, առ տէրն Խալդիւ, Մենուաշ, որդի իշպուինւոյ նորոգեաց զայս տռասի » :

Այս արձանագրութեան կետևեալ տողերն կը կարդամ ես, ըստ հրատարակեալ բնագրին,

2. [յ. մ.] Ամենուաշի-ի-նու-ու-աշ-է (յ. մ.) Իշպու-ու-ի-նի-է-իս-ի-նի-շ-է (է)

7. [յ. բ.] Տու-ուշ-պա-ա պա-ա-ում-րի....

9. [յ. մ.] Խշ-ապու-ու-ի-նի-է-իս-ի-նի-շ-է (է)....

իսկ ամրող արձանագրութիւնը կը թարգմանեմ այսպէս.

1. « Ա խաղդեան աստուածոց շնորհին, Խաղդեան իշխանք,

2. « Մենուաշի իշպուինեան,

3. « Ա նորոգեաց զայս տաճար. նորոգեաց (նաև) զպալատն,

4. « Ա զնացեալն, Մենուաշի իշպուինեայ,

5. « (որ է) արքայ հզօր, արքայ մեծ, արքայ երկրին Շաուրացւոց,

6. « Ա արքայ երկրին Վանեցւոց, արքայ արքայից, պես

7. « Ա քաղաքին Տուշպայ: Խաղդեան աստուածոց շնորհին,

8. « Ա քաղաքին Խամար,

9. « Ա իշպուինեան նորոգեաց զայս տաճար ն:

\* \*

Այս միսինք տող առ տող լուծել և քըննել, ինքինքան արդարացընլու և պաշտպանելու համար, թէ ինչո՞ւ գաստուէս և ուրիշ ասորինստանագէտներէն տարբեր կերպով կը մեկնեմ:

1. Այս աստուեց անունն ասորիստանեան արձանագրութեանց մէջ ևս կը գտնինք. զոր օրինակ, Խորսարքի պալատին մեծ արձանագրութեան համեմատ երբ Սարգսն կը սէք, թէ աւերեց Մուցացիր (= Արճէշ) քաղաքն ու զրաւեց մէջի բուրու մարդիկն և հարստութիւնն, զրաւուած նիւթոց մէջ կը գտնուէին նաև խալդի-ա և Բա-ագ-բար-րուշ կամ Բա-ագ-մաշ-բուզ աստուածոց կուռքերն ու նորիսան անօթներն. « Անր-սա-ա, Անր-ար-տի երկրին (= Արշարտնեան) թագաւորն իմացան Մու-ցա-ցիր քաղաքին աւերիլն և իւր խալդի-ա աստուեցն զրաւումն », ու բարկութենէն « անձնապան եղաւ զաշունի Հա-շ-դ-ի-տա (Յ), (Տիւտ

մը հարուածով „: (Les Fastes de Sargon, տող 76-77: Հմտ. նաև Inscription des Annales, Khorsabad, սրահ Բ, Տիւտ. 13, և Բուտու 77):

ինչպէս տեսնուեցաւ օրինակէս՝ երկու տեղ ալ խալդիս ձեռվ կը ներկայանայ այս աստուածն, զոր Քէլշինի արձանագրութիւնն, կը յիշ խալդի-է ձեռվ (1). բայց ընկիկ (տոպալիսն) արձանագրութեանց մէջ խալդի կը կոչուի նաև Ուրեմն կրնանք հայերէն « Խաղդիս », կամ « Խաղդի », ըսել, անջուշ նախապատուութիւնը տալով երկրորդ ձերն: Այս « Խաղդի », ինչպէս անցեալ անգամ ըստք, Ուրարտանց « գերացյն աստուածն է և հայր ամենեցուն ». Հաւանական ութենէ որուք է բոլորովին՝ և նոյն իսկ սխալ կարծելն թէ խալդի յատուկ անոն մը չէ, այլ հասարակ անոն մըն է, և կը նշանակէ « աստուած », որպէս կը պնդեն Ուպակեր (Zeitschr. für Assyr., 1887, Բ, երես 104 և այլն), և Rasiabin (Mém. de la Société de Ling. de Paris, 1894, ամեր Ե, երես 381), այն Ուպակեր՝ որ ընկերակցութեամբ Մենադ Խորարագի վերջիշեալ մեծ արձանագրութիւնը լուծած տաեն խալդի աստուած համար սա ծանօթութիւնը կու տար. — « Nous retrouvons, dans les inscriptions de Van, le dieu *Haldia* comme dieu des Arméniens..., (անդ, երես 7, ծանօթ. 1). և միթէ նոյն Սարգսն արձանագրութեան Դեռ տողին մէջ որոշակի չ'ըրեւէր թէ խալդիս և Բագրարիոց « Հայոց », աստուածներ են, թէ և հարի շնորհ այլ ևս ուրիշ ապացուցի դիմելու՝ յիշեալ երկու գիտնականաց սապարկութիւնները ջրելու համար, սակայն ի ծառ խօթութիւն բանասիրաց կրնանք յաւերւու միայն թէ թէ հաստատնի արձանագրութեանց մէջ ալ հայ անձնաւորութիւն մը կը յիշուի, որուն աննունը թէրեւ առնուած ըլլույ խալդիս աստուեցն անունէն. այսպէս ըստ պիեծնեան բնագրին՝ Հա-շ-դ-ի-տա (Յ), (Տիւտ

1. Քէլշինի արձանագրութեան մէջ երեք անգամ բարձրի շա (ՈՒՈՒ) խալդի-է (= « Երրունք Խաղդիք աստուեցն ») յիշատակութիւնը կ'ըլլոյ, (տող 19, 27-28 և 34, ըստ ասորիստանեալ բնագրին), որ անջուշ մեր ազգային մատենարարաց « Իրաւնք Խաղդիս », կրչածն է, ոչ թէ « շներ » ։ « տաճար » և կամ « արձանագրեալ կորոյ ։, ինչպէս կը կարծեն Հիլենա (Dr. Cauz, au Golfe pers. երես 526) և Եկլ (Rec. des trav. égyp. et assyri., 1893):

2. ինչպէս Spiegel առաջին անգամ սխալած է, նոյնպէս Kossowicz և այլք կը սխալին Հա-ս-դ-ի-տա կարգալով:

Գ, տող 78), և ըստ մարտական բնագրին՝ խաշդի-դաւ. (Տիտու. Գ, տող 36).

Բայց ի՞նչու խաշդի-ի-ի-ի մեջ մեր թարգմանել Առ Խաղուանան,, (Եէլ, վերը), “Առ որդին Խաղդին” (Սէլս, Cun. Insc. of Van; և Հէման-թէլք. Zeit. f. assyri.), “Խաղդին որդւոց համար”, (Սէլս, անդ) և վերջապէս “Խաղուան համար”, (Հէման-թէլք, անդ): Կը թողուած մէկի մրւակ սոստիսանարաններուն տուած քմահան մեկնութիւններն, և կը բացատրեմ իմ տարրեր թարգմանութեանս պատճառն. — Ասորեստանարանք ընդունած են թէ տոսպական արձանագրութեանց լիզուն կապակցութիւն ունի կափահար բարբառներն միոյն հետ, որ անժիստուի է: Այս բարբառներէն մտանանիշ կ'ըլուին լասերէնն, արխազերէնն, տատերէնն<sup>(1)</sup> և ի մտանաւորի վրացերէնն: Արդ նկատելով որ վրացերներ մէջ վերջապէիր մասնրկան կրինութիւնն յոդնականացուցիչ զօրութիւնն ևս ունի, և այս ձեռ աւելի որոշ կը տեսնուի ...թի՞ին վերջաւորութեան մէջ, որոր օրինակ՝ եռմեջտուեանու (ասմիերիսանեանի) = “Հայք, ու ուստի մեր ծանօթ խաղդինին բառն պէտք է նշանակէ “Խաղդտիք-ք”, որուն սկիզբը զոնուած աստուածութեան յայտար արնչանն միասին առնլով ինչպէս կը տեսնուի բոյոր այս կարցի արձանագրութեանց մէջ՝ կ'ունինակը “Խաղտեան աստուածք”,<sup>(2)</sup> և քովի ոչշմաւա-

շի-ի-նի բառին պատճառաւ. — Խաղդինինի ուրմաշինի = «Խաղդեան աստուածու շնորհիկ», բառ առ բառ: Շնչմաշինի երբեք չի նշանակեր “մէծ”, որուն կը համապատասխանէ արտէ կամ այսովհինջ բառն, այլ ինչպէս 1873ին Պարիսի մէջ գումարուած Արբեւելագիտաց Համաժողովոյն մէջ յայտնած է մերագրի մեծ բանասէրն Պատկանեան, կը նշանակի “շնորհիւն”, բայց ըստ Գ. Հ. Միլիլի “ցուցացու”, (Die Keilinsch. v. Aschrut-Darga) և ըստ Սէլսի “propitious, gracious”, (JRAS), որոց երկուքն ալ կը նշանակին “նպատաւոր, շնորհալի”, Պատկան բոլորովին տուրեր կերպով կը թարգմանէ “ոյաւուրեք ու օսաւուրեք ու որով վերական սխալ մ'ալ կ'ընէ. գոյն զի տոսպական արձանագրութեանց մէջ կատարեալի տուածին գէմքն կը վերջանայ բիով. զօր օրինակ մեր անցեալ անգամուան թարգմանութեան համեմատ, — խասորի = “նուացեցին”,<sup>(1)</sup>:

Քանին մը տարի յառաջ “Աքադերէն և հայերէն”, վերնադրին տակ ի մէջ այլոց սա տողերը գրած էի Մասս հանդեսին մէջ (թ. 3988, 24 ապրիլ 1892). և Աքադերէնը կը պատկանի տուրանեան լեզուաց կարգին, որը կը խոսէին տասմանզման Ախոյ մէջ սկիւթական ցեղեր, Արիական և Անսկան ժողովորդներէն յառաջ: Ազա սոյն ցեղերը տարածուեցան երկրին արեւմտակողմեն, և անտի հարաւ: Ըստ իս՝ այս միջցին էր որ “Խոտտիք”, աննունը տորւեցան Պնստոսի եղեցուած մէկ մասին, իրենց խաղդի դից անունէն: Այս կարծիքը Լէման Կերմանացիէն շատ յառաջ յայտնած էի բարեկամացան, — հակառակ կոստանդին Պերփեռութենի կարծեաց, որ խաղտեած ժողովուրդը քաղցէաց ին զարթականներ կ'ընդունի, և ասայուն նոյց հմտագունին բայ ծիծաղն եւ եթ շարած էի, որով չէի համարձակած ի հրապարակ հանել. արդ նկատելով որ այժմ Լէման և իրմէ յառաջ Գուղջմիդ ևս իմ կարծիքն

մասմօրէն ծշամակելով տարրերութիւնները հանձր էր զայլ ազնուութեամբ առ մեզ լոյն:

Մ. Խմբ.

1. Անցեաւ անդամւան թարգմանութեան բրեր փոքրիկ ծանօթութիւն կը յաւելում: թէ այս խանցրի բառն իրարիք բոլորովին տարեր և սխալ կերպով թարգմանած են Լնորման և Մարման. այսպէս տառչինն թարգմանած է “շննէցի”, իսկ երկրորդն թարգմանած է “այրեցի”, և Աւանենէն մէջ ալ կատարեալը կը կազմուի փոփ կամ բիով. բայց կապերէնի մէջ բիով:

2. Ասորեստանեան լեզուն ալ ունի ասոր մօտ յոդնակի մը, բայց առանց կրկնութեան, դոր օրնակ՝ եղ. շար. իլ. ալ. յ.շ. շար-անի և արքայք-ք. ու. իլ-անի = “աստուածք-ք”, ալ-անի = “քաղաք-ք”:

\* զը փոխադարձեմ մեր խորիս շնորհակալիքը. առ յարոյ Յօդուածագիրը, որ ի փոխարէմ մեր առ իմօք յոած ընօրինակութեան, կրկնօ աշխատութիւն յանձն առնելով բաղդատեր էր զայլ իր քով ումեցած ուրիշ օրինակի մը թետ, և մասմա-

ունեցած են, այլ ևս չեմ վարանիր յայտարարել զայն ։ Ուրեմն մեր արձանագրութեան առաջին տողին մէջ կրնուած խարդիկ անունն իրաւամբ կրնանք թարգմանել “Խաղողի աստուծոյ պատկանող երկիր և ժողովուրդ = խաղուիր,, որուի կից ենորիյէ” “իշխանն, բատին հետ կ'ունենանք բառ առ բառ “ խաղուիր իշխան = խաղուեաց իշխանք,, փերջին ձևով իրու կոչական : Խորիյէ կը նշանակէ “ տէր, պետ, քրմագետ, իշխան,, համեմատելով առորեսաներէն թէլ բառին հետ ։ ստկայն նը-կասելով որ Խաղուեաց երկիրն կամ Ուրարտի թագաւորութիւնն էր եւ այլ փքրիկ իշխանութեանց կը բաժնուէր՝ յարմարագոյն համարեցի “ իշխան,, թարգմանել, ու քանի որ Մինուաշ խօսնի իրեն հպատակ իշխան-ներուն կ'ուղաբէ յոցնակիր փերածեցի եւ ար-դ. Հ. Սիւլլիր “ տիկին կամ տիրուիր,, կը թարգմանէ այս բառն (անդ). իսկ Ապակեր կը թարգմանէ “ բոլոր, ամէն,, և Հայէվին “ մեծ, հզոր,,

2. Այսորդ է նորէն կրկնելն թէ ..իշխ-նիշ կերպաւորութիւնն “ ..եան,, պէտք է թարգմանել. աստի “ Խաղուինեանն,, և ո՛չ “ որդի իշպուինուց,,

3. և 9. Հ. Եկլ Նոյնութեամբ Թողած է սոսի բառն, որը Դ. Հ. Սիւլլիր Անրուա-Գրագայի արձանագրութեան մէջ կը թարգ-մանէ “ աստուծն, փմափոր տաճան,, որուն հետակելով Սէյս ալ կը սրբազրէ իւր “ պատ, որմն,, թարգմանութիւնն ի “ մաստուծն, տա-նար,, Շառ իրաւացի կը գանեմ Միւլլիրի թարգմանութիւնն, քանի որ Ապակեր կը կար-ծէ թէ սոսի ասորեստանեաց որբանու բա-ռին կը համապատասխանէ և է գաղափարա-նանն “ սարդի, կամ “ գաղաթան լերին,, բայց պէտք է յիշցընել յարգոյ Ուսուցա-պետի թէ “ սարդի, գաղափարանշանն ե-զող ասորեստանեաց որբանու բառն արտղե-րէն կամ սումերերէն<sup>(1)</sup> ։ Շնի-Սի բառն է, և ո՛չ սոսի : Միւլլիրի “ փմափոր տաճար,, թարգմանութեան պատճառն այն է՝ որ Վիւնչ փմափոր խորչի մը մէջ գտած է նոյն արձա-նագրութիւնն, և թէ երկրորդ առղին մէջ

1. Աքադերէն կամ սումերերէն, կամ սու-մեր-աքադերէն, է այն լեզուն՝ որ կը խօսուեր թարելոնի նախնական ժողովրեան մէջ, և որով դրաւած են Բաբելոնի ամենահին արձանագրու-թէնք : Ասորեստանաբանք սումերերէնը կը ներկայացնեն գլխադիք՝ երբ պէտք ունենան գրել լատինական ասաերեւն ես ալ կը հետե-սէմ ընկալեալ սովորութեան,

Կ'ըսուի որ Խաղուինիշ իւր Մինուաշ որդւոյն հետ “ նորոգեց խալիի աստուծոյ տօսին = տաճարն,, :

4. Մէնուա-Եի անուան վերջի մասնիկն են սեռականի հուովանիշ համարելով կը թարգմանեմ “ Մինուաշ-ի,, այսինքն “ Մի-նուաշի պալատն,, փոխանակ թարգմանելու “ վասն,, մանաւանդ որ տարակուուանոգ կը զնէ Եկլ : Այս մասնիկն Սէյս և Լէմուն կը թարգմանեն “ պատկանեալ,, որ հաւանակա-նութենէ գորոկ չէ բոլորովին՝ եթէ համե-մատուի իմ թարգմանութեանս հետ :

5. և 6. Այս երկու տղերուն՝ մանաւանդ երտ տողին մէջն է՝ որ ըստ է իր գիտն Հ. Եկլ՝ Մինչեւ ցայուու անձանութեանց “ ար-քայ,, զաղափարանշանին ընիկ կ'զուաւ ըն-թերցումն, և կը կարդային շար հետևելով ասորեստաներէնի . բայց Նկատելով որ ամէն անզամ զաղափարանշանով ներկայացուած “ Փ. Արքայ զօր, արքայ մեծ,, . . . արքայ արքայից,, սովորական բանակնուով արձա-նագրութեան օրէ և երտ տղերուն մէջ նոյ-նութեամբ կը գտնուի, և երտ տողն “ արքայ արքայից որ գրելու տեղ՝ շար երի-երա-պո-է ունի, կը ստիպուինք ընդունել թէ ե-րիառաք կը համապատասխանէ “ արքայից,, բառին, որուն եղակին ալ կ'ըլլայ երիազ = “ արքայ,, Այս մի և նոյն բանեանը կը գտնենք նաև Սարդուրիշ մէկ արձանագրու-թեան մէջ (Չուլց, թ. ԽԱ<sup>3</sup>) այսպէս :

8. (յ. մ.) Սարդուրիշ-ի [ (յ. մ.) Ար-գիշ-տի-իսի]

9. շար րարահէ շար ալ-առ-ի-նի [շար ե-րաւանէք Չուլց-լրա-ու-է]

10. շար երանառէք թի-ա-ի-նա-ու-է [շար ե-րի-զա-ու-է] (1)

1. Սէյս կը սիսալի երկուքի բաժնելով այս բառն (թ. ս. թ. 3) — շար-է խոչ-լա-ու-է, որիէ Քհանուցնէ թէ Աւրատան լեզուու “ ար-քայ,, և կը կաշուէր խորչա. բայց Սէյսի խո-ընթերցումն ալ ուղղելի է ի թի. գառն զի այս ասաին մէկ զինը կոստան կը ներկայացընէ Չուլց : Վերջին պահուն կ'բանամ չ. Եկլ-էնը թէ Լէմուն նամակ մը զրելով իւրեն հեր-քած է “ արքայ,, բառին երիազ ըլլաւն, և Եկլսին կարծիքն հաստատելով կը պնդէ թէ Չուլցի օրինակին մէջ խոչ-լա-ու-է ձևով է : Բայց ինչպէս վերն ըստ, նորէն կը կրկնեմ թէ յիրաւաք Չուլց թէնի խոս ունի, բայց օրի-նակութեան մէջ նոյն ասաին մէկ մասը կո-տրած նշանակած է. արդ կտրած մասն ուղ-ղահաւեց սեպի մը յաւելմաբ ամբողջացը-նելով մեր կունենակ կ'ունենանք ըն, որուն Ըշուաթիւնը կը հաստատուի Մանազկերպին ներ-

11. *ա-լու-ու-ս-սի-է պառամի Ցու-ուշ-պա-  
կ (յ. ք.)*

*Աւելի հաստատ ապացուցի համար դիմենք  
Հ-ներսէ Սարգիսեանի Երբ արձանագրու-  
թեան, զոր արդէն օրինակած է Շուց (Թ.  
Ա.Ը), որոն հետեւեալ տողերը նոյնութեամբ  
կրնանք համեմատել մեր 4-7 տողերուն հետ.*

5. *(յ. մ.) [Մար-դու-րի-եի] (յ. մ.) Այ-  
դիշ-տի-է-ինի*

6. *[Հար այ-ուշ-ի-ն] նի շար երանառէ Շու-  
րա-ու-ք*

7. *[Հար երանառէ թի-ա-ի-նա-ո] է-ի շար  
շարրանի-ու-ք (1)*

8. *[ա-լու-ու-սի-է պառամի] Ցու-ուշ-  
պա-ու-ք (յ. ք.)*

Հ. *Ենչլ երիաշ = “արքայ, բառէն  
կազմուած կը կարծէ ստոպական քանի մը  
անուններ, ինչպէս Եղիսաբէի, Եղիսէնաշ, Ե-  
րինաշ, ևայլն. որոց վրայ կը յաւելուն նաև  
մեր ազգային մատունագրաց “Արաւէդ, ն՝  
զոր կը մեկնէ “արքայաստուածք, արքուն  
աստուածք, և, հակառակ մեր մատունագրաց  
և բանափրաց որք կը կարծեն թէ ուղար-  
գայն ձեն է “Յարաւէզք = յար լիզովոն (2).*

Կայ արձանագրութեամբ՝ ուր բացաձակ կեր-  
պազ կը տեսնուի թէ ուր է, աչ թէ խոչ:

1. *Քիչ մը գերը՝ երես 75.287 ծանօթութեան  
մէջ ըստնք թէ շար = “արքայ, բառին յոդնակին  
կը ըլլայ շարրանի. Բայց հոյ գրին ու-ք աս-  
սինին աւելցուածք է որպէս ի շնորհցող ու-  
շարրանին ընէ “արքայ ու գաղափարոնչանն  
յաջորդող նէւ տարին, որ յայտաբար նշնո՞ն  
է յոդնակի, և կարդայ երիալուն: Տես նաև  
վրայ, ծան:*

2. *Եղնկայ “իբրէ զնովացուն” զոր ի կովէ  
եւելա ասեն, և զպայն իմ ի մարդկանէ, և  
զառեղջ ի շանէն է “Ո ոչ ի շանի ինչ ե-  
լաւ, եթէն: (Ա, Ար) Խորեկէն կրնանք հե-  
տեղցնեն թէ Յարաւէզք տեսակ մը աստուա-  
ծացեալ շուներ էին: Այս տեսակ աստուա-  
ծացեալ շունեն են Արարակի հետեւոր  
շոր շներն՝ Ռիկիսուն: “յափառակին”,  
Ակիսուն = “յաւելն”, իկլուսուն = “կոր-  
զին”, և իլրէրու = “յակեցուցին”, (Հմատ.  
Rawlinson. *The Cuneiform Inscriptions of Western Asia*, թ. երես 56, առող 22-25): Պրո-  
Սերովէ Ալիշանին քով վրանիկ մաւ կը դը-  
նուի, որոն վրայ քանրակուան է Մարտովկ  
աստուածք ասին մը վերէց բաղմած և աալիշ  
շուն մը: Անզ շուն այս Մարտովկ աստուածք  
և իրեն շներն են որ կը յիշէ թակու Սրճեցի  
էր “ի վրայ անկանն կաց ու բանաստեղծու-  
թեան մէջ ըստեղ թէ պաշտէին ի նասան  
“Տէր (ընդ շնեն): (ZDMG, Խթ, երես 410):  
Արդ չենք կրնար Մարտովկ շանց հետ նոյն  
համարել մեր “Յարաւէզք, ն:*

Ենչլ կը համեմատէ նաև Պլատոնի Հան-  
դաշտութեան մէջ յիշուած կը անունն երի-  
շի (1) հետ: Այս իր՝ Արմենիոսի որդին է,  
զոր Մ. Էմին Խորենացոյ ուսուերէն թարդ-  
մանութեան մէջ (երես 254 և 255) նոյն կը  
համարէ Արայ Գեղեցկին հետ Հմեն: Նաև  
կիլիկան Տարկոսարիս, Տեղիարիս, Արիս  
անուններն ի Sachaau.

7. *Ուրարտացի դպիրք սովորութիւն ըրած  
են ստոպական արձանագրութեանց ամէնուն  
մէջ աւ, առանց բացառութեան, Տուզպա =  
“Տուպ”, անուան սկիզբն ու վերջը կրկնել  
“Քաղաք, ի գաղափարանշանն, որ ուրիշ*

1. *Ենչլ կը կարծէ թէ երիառէ յոդնակի  
ստոպական էկին եղակի ուղականն ըլլայ իրիշ,  
և թէ շառէն ստուկին հետ՝ յոդնականացուցէի  
վերջադիր ըլլայ: Բայց իմ խոնարհ կարծեաք  
յոդնականացուցէի վերջադիրն է միայն — ու-  
ականին համար ուստ կամ թերու առէն. այս  
պէս, եղակի ուղղ. Երիաշ, յա- սեն. Երիա-  
ռանէ. ինչպէս նաև ծոր տողին մէջ յեշուապէ Հա-  
ուրդա-ուկն յգ ստոպականն է Շուրայ կամ Շա-  
ուրդա անուած, և եր ասովին մէջ յիշուած  
թիկինա-ուկն՝ յգ. ստուկանն է թիկինալ =  
“վան, անուած: Jensen և քետացի արձա-  
նագրութեանց մասին գրած հմտական ընդար-  
ձակ ստումանիութեանը մէջ կ'ընդունի թէ  
ուկ՝ յոդնակի ստոպական կը կաշւէ առջ վերջա-  
ցած բառերու մէջ, ի ստոպական բնեւեաքնակակ  
արձանագրին. (ZDMG, 1894, Խթ, երես 434-  
436). ասով կը հաստատուի իմ կարծեաք ։  
Այսուն սիւլ ընդհատում մէջ, նկատելով “ը-  
նա բարդութեանց մէջ կը նշանակէ “Քաղաք” ո-  
ւսում նասէն, չ թէ յոդնականացուցէ մաս-  
նիկ է, այլ նա-ուկ = “Քաղաք-ք-ք”: Էկտան  
թիկինին Տարրաբանական Ընկերութեան առջի  
(1892 ապրիլ 30ի և 1893 հոկտ. 19ի նիւ-  
տերուն մէջ) հաստատու է թէ ու նշանակա-  
կէ “Քաղաք-ք” այսուն: Տուզպա = “Տու-  
զպա Քաղաք-ք”, իբրէ Մարտովկ հետեւա-ուկ  
նաև ասուածքին շնենենալն աւելի ու կե-  
րպէ կը տեսնուիք: Մեր օրինակին թիկինա-ուկ  
նաևնէն, որ ուրիշ արձանագրութեանց մէջ  
իբրէ կը բուռու գրութէ ի թի-ա-ի-նա-կ, թի-  
ա-ի-նա-դի, թի-ի-ա-ի-նա-ի-դի, թի-ա-ի-  
նա-ա-ր-քէ, ևայլն ձեերու, որոնցմէ կրնանք  
հետեւցնել թէ եա արմատական է այսաեւ,  
ինչպէս կը հաստատուի նաև սրդի “Վան” ո-  
ւնիքութեան հետ համեմատելով: Ենթարկելով  
որ նառէ յոդնակի ստոպական կազմող մասնիկ  
մէջ, այն ասեն պէտք էր որ ունենայինք  
“թիկինա-նաև ասու մէջ արձանագրութեան Շաուրաց  
անուածն փոխանակ ունենալուն Շաուրաց  
պէտք էր որ ունենայինք “Շաուրա-նառէ:*

տեղ՝ սկիզբը միայն կը դրուի, ըստ սպորտաթեան՝ բայց այս անքամ գպիրը կը իստորի իր և իր պաշտօնակցաց ուղղութեանէն, և մեր արձանագրութեան մէջ ջոշչպա անուան սկիզբը ծանօթ յատարար նշանը դնելէն յետոյ՝ ջոշչպաէն անմիտակն եւքը փոխանակ նորէն կրկնելու նոյնը, կը զնէ բոլորովին նոր բան մը՝ ամրող գրերով գըրուած, որ կը կարդացուի պա-ա-դռաս-րի կամ պա-ա-ռամ-րի։ Ենիւ ասկէ կը հետեւ ցընէ թէ “քաղաք” ։ Կը կոչուի ուրատեան լեզուաւ պա-ա-դռաս-րի։ և սակայն կասկածելով՝ որ թերեւ առաջին երկու տառերն (պա-ա) ընդօրինակողին մէկ սիման ըլլայ, նախորդ ջու-ոչ-պա-ա յատուկ անուան վերջին երկու տառեց կրկնութեամբն, կառաջարկէ ընթեանուկ միայն դրապիր։ Թող ներուի համարձակութեանու թէ ես այս կարծիքն չեմ. մասն զի, նաի արձանագրութեան այս մասն քարին երկու երեսին վրայ տարածուած է այսպէս — ջու-ոչ-պա- (և շարունակութիւնը միւս երեսին վրայ անցընելով) ա պա-ա……, որ անկարելի է շփոթութեան և կամ կրկնութեան տեղի տայ, մանաւանդ այսպիսի անձի մը՝ ինչպէս օրինակ պաշտօնէն՝ որ տարեստանաբանութեան անեղանք շըլլատուն համար, ստիպուած էր տառերուն վրայ նայելիք գծագրին հաւատարմաբար, պատկերահանի մը գերը կատարելով պարզապէս։ Եթէ այս կտորը մի և նոյն տողի վրայ գրուած ըլլուր՝ թիւ մը կատածելի կրնար ըլլալ, ենթադրելով որ օրինակողն անուշադրութեամբ երկու անգամ գծած է պա-ա տառերն. բայց ոչ, ինչպէս տեսանք, մէկ մասը քարին մէկ երեսին վրայ գրուած է, և միւս մասը քարին յաջորդ երեսին վրայ գրուած։ — Երկրորդ դիտութիւնա պն է՝ որ Ենիւն դուզ կարդացած տառը պէտք է կարգալ ԱԽ։ Այս փոքրիկ շփոթութիւնն յառաջ եկած է՝ ԴՈՒ և ՈՒ տառեց իրարու հետ ունեցած նմանութենէն։ ԴՈՒ ունի շրու ուղղահայեած սեպ, իսկ ՈՒ ունի երեք հատ միան։ և մեր օրինակին մէջ ալ ճիշդ երեք հատ է։ Ուստի ուրատեան լեզուաւ “քաղաք”, պէտք է Կոշչուի պա-ա-ռամ-րի կամ պառամ-րի։

Պարփս, 20 դեկտ. 1896.

#### Կ. 8. ԲԱՍՄԱՆՁԱՆ

Յ. Գ. — Արմարի մէջ վերջերս գտնուած և կոտրած աղիսի մը կորդի վրայ գրուած (Սմբատեանց թ. 23, Տեղագիր Գեղարքունիք ծփազարդ գատառ, 1896, երես 777) “Կեղծ ու շինծու, արձանագրութեան (թագ. 1896,

երես 328) հարազատութիւնն կը պաշտպանէ բնելք փականական համարելով զայն, առաջի թիրլինի Մարդաբանական Ընկերութեան (նույն 16 մայիսի 1896. Հմմո. (Zeitsch. f. Ethnologie, 1896, երես 315) (1)).

Նոյն

#### ԳԻՆԻ

Իտալական օրագրի մի, — Giornale di Erudizione կոչուած՝ որ Փոյրինախոյ մէջ կը հրատարակուի, — նախորդ համարներէ միոյն մէջ բանասէր ոնն հարցում մը ցըրե էր, թէ արդեգոք յուն. օճա և օնօս, եւ լատին. ունութ եւ սօս բառերուն մէջ ու եւ է աղերս չի կայ ամենեւը։ — Արդ, յիշեալ լրագին Յանուարի թիրլին մէջ, G. Nerucci ստորագրութեամ հետեւեալ պատասխանն տրուեր էր։

Ա Բնաւ ու եւ ստորագրանական ծագութեամ աղերս չի կայ յուն. ծա, ծի, օղի եւ օճա (այլեւայլ յուն զաւառարարապէ՝ որք կը նշանակին արօսի կամ սին, լատ. *sorbus*, չաղղ. *cormier*, գերմ. *Vogelkasten* — ժամ բաշնոյ) եւ օնօս, եւղական բարբառով Փոյնօ, յորմէ ծագեր է լատիներէն տնութ, եւ սօս բառերուն մէջ. ուստի անկարելի է որ արօսոյ կամ սինի եռացեալ շեղուն կոչուած մին տնութ, եւ թէ միանգաման սահ-էն չի կամուէր տնութ բառն։ Հմմո. GEBORG CURTIUS, Grundzüge der Griechischen Etymologie. թէ եւ թղուաբննական զիտութիւնն տարուէ տարի հսկայագոյլ կը զարգուայ, սակայն ոչ սակաւէ տակաւին այն նախապաշտրան մէջ են, թէ աշխարհին ամենայն լիցուք երբայսականէ յառաջ եկեր են, և այս ։ Գիտնականն յունական ստորագրանութիւն արիական նախատիպարին վերայ հաստատուած է, եւ ոչ սեպականին։ Եւ հետեւարար ցհան (?) բնաւ առնյութիւն չոնիք ոչ օնօս եւ ոչ տնութ բառերուն հետ։ սակայն, պէտք է աւելցընել, թէ այդ բառն հայերէն գլմիի հետ ունի նմանաձայնութիւն. եւ եթէ G. Nerucci հույսու ըլլար հայերենի կամ արեւելեան լեզուաց, անդուշտ ուրիշ օճով պիտի զըրը իր պատասխանը։

1. Կրկին անգամ կը խնդրեմ մեր աղջային բանասէրներէն որ եթէ տասպական նոր արձանագրութեան մը հանդիպին՝ բարեհամբն անոր նմանահանութիւնն ինձ յշլ, այս հասցեով։

Basmadjian  
108, Avenue de Neuilly.  
PARIS - NEUILLY.